60. ԹՈՐՔԻՆ ՀԱՐՆԸ

Ասում ա՝ մին Թորքու հարն ա ինում։ Էս հարնը խե շատ լաշառ, հայասրզ ա ինում, ըսկեսվորը օր ա տամ, ումբրը չի տամ։ Սաղ օրը սոված ա պահում, ծարավ, վայը եկալ ա, թա վրեր ըսկեսուրը մին խոսք ա պիրանան տուս կալալ, հարնը էլ աղին ու բոզին եշում չի, հինչ վրեր հըսնում ա, յըրա յա անում ըսկեսուրին անա տամ, թակում, թան ծըմելա քցում։ Ըսկեսուրը վրխելանը նհետ կարում չի, թա տղին կյանգյաստ անե։

Հարնը ասում ա. «Թա վրեր տղետ ասալ ըս, սրանա ըեթար օր կըքըցիմ»։ Իստի ամեն օր, էս պառավին տղա Աֆանգին տանան տուս ա կյամ թա չէ, հարնը ըսկսում ա ըսկեսվորը թակել, շորերը հանել, ճընչլոտ շորերը կյենալ տամ, ըստիպում, վրեր խեղճ պառավը ծեռքերը պըցըրցնե, յալլի սլար կյա, տես թող ինի, տեն թող ինի։ Պար կյալանը ետը հարնը պերում ա ուրան հետն լավ-լավ խրավածնե, էն վրեր ա սկեսվերեն հետե լրղլրղան ճուր։ Եվ իստի ամեն օր, ըսկեսվորը հաց չի տամ մուչունք, վրեր խեղճ պառավը եր չի կենում ուրան ճրղոտած շուրեբավը պար չի կյամ ուրխըցնում հարնին, հարնը հաց չի տամ, վրեր սկեսուրն օտե։ Լհա վրեր տղեն կյալեն վախտը մրտանում ա, հարնը ըսկեսվորը չընթռոտած, ծընկըլնեն կախ-կախ շորերը հանում, թազա շորեր ա կյեց տամ, երե թախտին նըստըցնում։

Մին վախտ էս մեր Աֆանդին եշում ա, տեսնում, վրեր ուրան մարը օր-օրին յըրա հալվում, մաշվում, չուփ ա տրեռալ։

— Ա՛ սար, էս քյեզ հինչ ա՝ պտահալ, խե իտի լղա՞րալ ըս, տղաոու հո՞ւ չըս։

Մարն ասում ա. «Կարել չըմ ասեմ, դարդս շատ ա»։ Տղան ասում ա. «Վախել մեր, ասե»։ Մարն ասում ա. «Կարել չըմ ասեմ, թա օղում ըս դարդս դյիդաս, մին օր տանը կաց, թաքուն մին տեղ կյողլը կաց, էն վախտը լոխ կրգյիդաս»։

Էլյոր Աֆանդին թաքուն կյողլ ա կենում, փըդերեն քըմակեն, նշում ա, տրեսնում հի՞նչ։ Կնեգյը մորը թակում ա, ետը հետը շորերը հանում, չըթոոտած շորերը կյեց տամ, ետնան պար ածում, ինքն էլ ուրխանում, վրեր ըսկեսուրը թող-թող ա ինում, քրչոտած շուրերե ծրնկըլնեն կախ-կախ իլած ծափ ըն տամ, էն վրեր ա հարսը ծրծաղում, ուշկլինա յա ինում։

Ըսկեսուրը հա՛մ դար ա կյամ, հա՛մ երբ ասում.

Սրս էս ա, Աֆանդի,
Շորերս էս ա, Աֆանդի,
Կերածրս էսա, Աֆանդի,
Կեսն էլ ճուր ա, Աֆանդի,
Իրեք դաստա՛ շորերան,
Թաղտն էս ա, Աֆանդի,
Ասածու որը, հալրս էս ա, Աֆանդի։

Պար կյալանը ետը, Աֆանդին եշում ա, տրեսնում, վրեր էսա կնեգյը սկրով ամանը ճուր ածից, մին կտոր էլ շոր հաց տվավ, թա. «Կե՛ր, ամմա վրեր աղեղ ասալ ըս, ըստրանա ռեթար օր կրբրցիմա»։

Աֆանդին էլ հըմփերում չի կյողլը կացած տեղան տա՛ուս ա կյամ, կընդանը յրրա սրրծնում, տոր վրեր կտաս, էնքան ա թակում, վրեր թան ծրմելա քրցա՛ում ա։ Թրկելանը ետը մին գյիրվանրա մեղր ա սանում, կնդանը տկլորցնում, էտ մեղրը քսա՛ում կընդանը ջանը, տանում ծրմակում մին ծառա պենդ կրպկրպոտում։ Ծրմակումը հինչքան մրջիմնը, պղոճ կա, լոխ յրրան ըն տեռնում, էնրան օտում ըն, վրեր ջանը տա՛ուս ա կյամ։